ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 22

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի 2023 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստին ներկա էին ավագանու ութ անդամներ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը, Սերյոժա Այվազյանը,Արսեն Գրիգորյանը:

Բացակա էին Վրույր Այվազյանը, Արտյոմ Տոնոյանը, Վարսենիկ Քալաշյանը,Թամարա Գրիգորյանը, Հրայր Թորոսյանը, Համլետ Գևորգյանը,Ալիկ Սարգսյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Կ. Լալազարյանը, Գոռ Աղաջանյանը ,համայնքապետարանի աշխատակիցներ՝ Մ. Մեսրոպյանը, Ս.Սուքիասյանը, Ա.Դավոյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Խաչիկ Վարդանյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Սերինե Նալբանդյանը</u>:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

/զեկ. Խ.Վարդանյան/

2. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

ԼՍԵՑԻՆ՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Խ.ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թ. հոկտեմբերի 30-ի արտահերթ նիստի օրակարգը՝համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 107-Ա/

Լսեցին ՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2023թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 108-Ն/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ

_____